ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » հունիսի 2016թ N 14 - Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՆԱՍԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 30-ի թիվ19-Ա որոշումը, քաղաքացի Սանասար Գաբրիելյանի 2016 թվականի հունիսի 14-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում գտնվող Սանասար Գաբրիելյանին պատկանող անշարժ գույքին՝անասնաշենքին (ծածկագիր 04-035-154-013-001) տալ հասցե՝ 3-րդ փողոց թիվ 3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի հունիսի 15
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24 » հունիսի 2016թ N 15 - Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N15-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ատեստավորումը նշանակել և անցկացնել 2016 թվականի հուլիսի 28-ին ժամը 12:00-ին:

2.Համայնքապետարանի աշխատակազմի ատեստավորման նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հայաստանի օրենքով նախատեսված կարգով:

3. Ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / 3.1-1 / Լուսինե Գևորգյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի հունիսի 24
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« 2 » հունիսի 2016թ

N 16 - Ա

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով՝մշակույթի տան տանիքի մասնակի վերանորգման աշխատանքների իրականացման, վերահսկման և թերությունների գնահատման նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին / Ս. Գրիգորյան / `սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Հանձնաժողովին /Ս. Գրիգորյան /`սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամ՝Աշոտ Արզումանյանին և ֆիզիկական անձ՝Աշոտ Դավթյանին և Եղիշ Կիրակոսյանին /համաձայնությամբ/:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի հունիսի 2
գ. Գրիբոյեդով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ղեկավարի
2016 թվականի հունիսի 2-ի
N 16-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Գրիգորյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Անդամներ՝

Ա. Բաբայան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Դ. Դավթյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Աշխատակազմի քարտուղար — Ա. Քեշիշ-Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 6 » հունիսի 2016թ

N 17 - Ա

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, « Առևտրի և ծառայությունների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 17 ' -րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում առկա տնտեսվարող սուբյեկտների մոտ հսկողության իրականացումը վերապահել աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Սուրեն Գրիգորյանին:

2.Հսկողություն իրականացնող աշխատակից Սուրեն Գրիգորյանին՝սույն կարգադրությամբ նախատեսված հսկողությունն իրականացնել հունիս ամսվա ընթացքում՝յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի մոտ մեկ աշխատանքային օրվա ժամկետում: Արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի հունիսի 6
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 7 » հունիսի 2016թ

N 18 - Ա

ԱՆԱՀԻՏ ՔԵՇԻՇ -ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 163-րդ 167-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N32-Ա կարգադրությունը և Անահիտ Քեշիշ-Ղուկասյանի 2016 թվականի հունիսի 1-ի դիմումը.

կարգադրում եմ՝

1. 2016 թվականի հունիսի 10-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Քեշիշ-Ղուկասյանին տրամադրել 2015 թվականի չօգտագործված արձակուրդի 16 աշխատանքային օրերը:

2. Անահիտ Քեշիշ-Ղուկասյանին աշխատանքի մեջ համարել 2016 թվականի հուլիսի 4-ից:

3. Աշխատակազմի քարտուղար Անահիտ Քեշիշ-Ղուկասյանի պարտականությունները ժամանակավորապես վերապահել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Ենոքյանին /3.1-2 /:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի հունիսի 7
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 29 » հունիսի 2016թ

N 19 - Ա

ՀԵՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի 2-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գրիբոյեդովի Բուժ.ամբուլատորիա ՀՈԱԿ-ի տնօրեն Հերմինե Պետրոսյանի 2016 թվականի հունիսի 24-ի դիմումը.

կարգադրում եմ՝

1. 2016 թվականի հուլիսի 11-ից Գրիբոյեդով համայնքի Բուժ. ամբուլատորիայի տնօրեն Հերմինե Պետրոսյանին տրամադրել 2016 թվականի ամենամյա արձակուրդից՝12 (10 նվազագույն, 2 լրացուցիչ) աշխատանքային օր:

2. Հերմինե Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2016 թվականի հուլիսի 27-ից:

3. Տնօրենի պարտականությունները ժամանակավորապես վերապահել Խորոնքի ԲԱ-ի տնօրեն Մարինա Ջիվանյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի հունիսի 29
գ. Գրիբոյեդով